ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ Ս. Բ.

Ամերիկյան միսիոներների ծավալած ակտիվ գործունեության հետևանքով XIX դարից մինչև XX դ. սկիզբն ընկած ժամանակահատվածում բողոքականությունը սկսեց տարածվել արևմտահայության շրջանում: Միսիոներների արձանագրած հաջողությունների պատճառների պարզաբանումն որոշակի իմաստով հնարավոր է տարածաշրջանի քաղաքական իրադարձություններն ուսումնասիրելու դեպքում:

1860-1870-ական թթ. Օսմանյան Թուրքիայում առաջ քաշվեց պանօսմանիզմի ծրագիրը, համաձայն որի կայսրության բոլոր ժողովուրդներն օսմանյան ազգի բաղկացուցիչ մասն են, որոնք չունեն ինքնուրույնության և անկախ պետականություն ունենալու իրավունք: Երիտթուրքերի ազգային քաղաքականության հիմքում ևս դրվեցին պանօսմանիզմի գաղափարները: Ազգային ինքնորոշման իրավունքը այդ ծրագրում լիովին անտեսվում էր՝ ի շահ կայսրության տարածական ամբողջականության, որի հիմքում թուրք-օսմանների՝ հպատակ ազգերին ձուլելու գաղափարն էր: «Ահա այսպիսի պայմաններում ծնունդ է առնում Օսմանյան կայսրությունում ազգային հարցը, և, իհարկե, առաջին հերթին Հայկական հարցը եղեռնի միջոցով լուծելու կոնցեպցիան, որի հեղինակն Աբդուլ Համիդն էր: Տեղի էր ունենում արևմտահայության եղեռն»[1]:

Աղքատությունը գնալով աճում էր Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի հայաբնակ այլ վայրերում: Հսկայական միջոցներ էին պետք միայն նրանց նյութական թշվառությունը մեղմելու համար, մանավանդ գավառներում, որտեղ երկրագործությունը կատարյալ քայքայված վիճակում էր[2]:

Արևմտահայերին այս ժամանակահատվածում սկսեցին օգնել Արևմտյան Հայաստանի կենտրոնական քաղաքներում և Թուրքիայի այլ հայաբնակ վայրերում հաստատված կաթոլիկ և բողոքական միսիոներներն ու նրանց կազմակերպությունները: Այդ օգնությունը հաճախ կատարվում էր դավանափոխության պայմանով, որը դժվարին այդ պահին լուրջ նշանակություն ուներ արևմտահայերի համար, ապահովում էր շատերի ֆիզիկական գոյությունը: Դրանով, սակայն, միսիոներները նաև բաժանում էին արևմտահայ բնակչությունն ազգային եկեղեցուց և հեշտացնում նրա ազատագրական շարժումների ճնշումը: Հարկ է նշել, որ եթե սկզբնական շրջանում Արևմտյան Հայաստանում բողոքականության տարածման հովա-

---

[1] **Խուրշուդյան Լ.,** *Հայկական հարցը, Ե., 1995, էջ 34:*

[2] *Բանբեր Հայաստանի արխիվների, հ. 3, Ե., 1974, էջ 174:*

նավորն էր Մեծ Բրիտանիան, ապա աստիճանաբար սկսեցին գործել նաև ամերիկյան, գերմանական, նորվեգական, շվեյցարական միսիոներներ:

Բողոքականությունը (protestans – բողոքող, առարկող) քրիստոնեության հիմնական ուղղություններից է: Այն ընդգրկում է դա-վանաբանական և պաշտամունքային առանձնահատկություններով միմյանցից անկախ և ինքնուրույն կրոններ՝ լյութերականություն, անգլիկանություն, կալվինականություն, անաբապտիստներ և այլն: Քրիստոնեական մյուս ուղղություններից բողոքականությունը տարբերվում է գլխավորապես նրանով, որ առաջադրում է Աստծո հետ մարդու անմիջական կապի սկզբունքներ՝ առանց եկեղեցու և հոգևորականության միջնորդության: Այս պատճառով բողոքականության մեջ կարևոր տեղ են գրավում մարդ-Աստված և մարդ-մարդ հարաբերությունները: Բողոքականության մեջ չեն գործածվում նաև քահանա և եկեղեցի բառերը. վերջինիս փոխարեն օգտագործվում են ժողովարան կամ աղոթարան, իսկ քահանա բառի փոխարեն՝ պատվելի կամ վերապատվելի: Նպատակ ունենալով բողոքականությունը հնարավորինս մերձեցնել Հայ Առաքելական եկեղեցուն՝ այդուհանդերձ, Օսմանյան կայսրությունում միսիոներները հիմնականում օգտագործել են եկեղեցի և քահանա բառերը, որոնք ավելի հարազատ էին հայերին:

Հայտնի է, որ «1846 թ. հունվարի 12-ին Կ. Պոլսի հայոց պատրիարք Մատթեոսի շուրջը հավաքված մի քանի հոգևոր առաջնորդներ որոշում են անեծքի ենթարկել բողոքական հայերին: Առաքելական եկեղեցուց վտարված բողոքական հայերը հուլիսի 1-ին հիմնում են առաջին բողոքական եկեղեցին, իսկ 1847 թ. նոյեմբերի 15-ին սուլթանական հրովարտակով կայսրությունում բնակվող բողոքականները ճանաչվում են որպես առանձին կրոնական համայնք: 1850 թ. նոյեմբերի 27-ին սուլթանի մեկ այլ հրովարտակով բողոքականներն իրավունք են ստանում նաև ընտրելու իրենց ազգապետին: Առաջին ազգապետ է ընտրվում Ստեփան Աբովյանը[3]: Ինչպես արդեն նկատեցինք, վերը նշված սուլթանական հրովարտակները ամերիկյան միսիոներներին կայսրությունում գործելու լայն իրավունքներ տվեցին»[4]:

Փորձենք պարզաբանել՝ ինչու բողոքականության տարածումը հնարավոր դարձավ Օսմանյան կայսրության այն տարածքներում, որոնք հիմնականում բնակեցված էին ուղղափառ քրիստոնյաներով և հայերով: Ուշագրավ է, որ «ամերիկյան բողոքական միսիոներներն Օսմանյան կայսրությունում իրենց քարոզչական գործունեությունը ծավալում են գլխավորապես հայերի և ասորիների շրջանում հատկապես այն պատճառով, որ այդ ժողովուրդները գտնվում էին առավել ծանր սոցիալ-տնտեսական, ազգային և

---

[3] **Փայասլյան Ստ.,** *Ամերիկյան բողոքական միսիոներների գործունեությունն Արևմտյան Հայաստանում 19-րդ դարի սկզբից մինչև 1880-ական թվականների կեսերը, Ե., 2006, էջ 7:*

[4] *Նույն տեղում, էջ 8:*

կրոնական ձնշումների ներքո»[5]:

Ակնհայտ է, որ «միսիոներների գործունեության սկզբնական շրջանում՝ չնայած իրենց ներդրած նյութական զգալի միջոցներին և զանազան կրթական և այլ հաստատությունների հիմնմանը՝ նրանց չհաջողվեց ձեռք բերել զգալի թվով համակիրներ: Սակայն 1890-ական թվականներին սուլթան Աբդուլ Համիդ Երկրորդի կազմակերպած արևմտահայության և 1909 թ. Կիլիկիայի հայության զանգվածային կոտորածներից հետո իրադրությունը կտրուկ փոխվեց: Սպանդից ողջ մնացած և ծնողազուրկ երեխաների մի մասի հոգածությունն ստանձնեցին տարբեր ազգությունների և երկրների կաթոլիկ և բողոքական միսիոներները»[6]:

Հայերը սկսեցին հարել բողոքականությանը նաև հուսալով, որ կունենան Գերմանիայի, Ֆրանսիայի, Ավստրո-Հունգարիայի և ԱՄՆ-ի պաշտպանությունը, կկարողանան ուսանել այդ երկրների ուսումնական հաստատություններում և ստանալ որակյալ ու անվճար բուժօգնություն:

Վերոբերյալ իրողությունները փաստարկում են, թե ինչու և ինչպես բողոքականությունը աստիճանաբար տարածվեց արևմտահայության շրջանում: Դա նկատելիորեն թուլացրեց Հայոց պատրիարքարանի դերը, ինչը համահունչ էր Օսմանյան կայսրության ազգային քաղաքականությանը: Սակայն դա նաև բացասական նշանակություն ունեցավ նաև Օսմանյան կայսրության համար, քանի որ եվրոպական տերությունները իրենց հավատակիցների շահերի պաշտպանության պատրվակով սկսեցին միջամտել Օսմանյան կայսրության ներքին գործերին:

Հատկանշական է, որ բողոքականության տարածումը նոր մղումներ ստացավ XIX դ. 60-ական թվականներին, երբ սկսվել էր ազգային հալածանքների նոր փուլը: Թուրք կառավարիչները 1894- 1895 թթ. կազմակերպեցին մի շարք ջարդեր, որոնք ավարտվեցին հայերի համար ողբերգական դարձած 1915 թվականով: Սկսվել էր հայ ժողովրդի համար օրհասական մի ժամանակաշրջան, որի ընթացքում Հայաստանում իրենց գործունեությունը ծավալած միսիոներներն ակամայից հայկական ջարդերի և ցեղասպանության ականատեսը դարձան: Նրանց հաղորդած տեղեկությունները, վկայությունները, հուշերը և գրությունները կարևոր աղբյուր են Հայոց ցեղասպանության ուսումնասիրման համար, մերկացնում են Օսմանյան կառավարության հակահայկական քաղաքականությունը՝ հերքելով ժամանակակից թուրքական պատմագրության ստահոդ վարկածները: Ասվածի ապացույցն են աղբյուրագիտական արժեք ունեցող ներքոհիշյալ աշխատությունները[7]:

---

[5] **Տերոյան Վ.,** *Միսիոներաբարեգործական կազմակերպությունների աշխատանքը Մերձավոր Արևելքում և Անդրկովկասում, Ե., 2008, էջ 5:*

[6] *Նույն տեղում, էջ 6:*

[7] **Barrows, John Otis.** *In the Land of Ararat; A Sketch of the Life of Mrs. Elizabeth Freeman Barrows Ussher, Missionary to Turkey and a Martyr of the Great War, New York, 1916;* **Knapp, Grace H.** *The Mission at Van; In Turkey in War Time, New York, 1915;* **Knapp, Grace H.** *The Tragedy of*

Միսիոներներն այդ ընթացքում իրականացրին մարդասիրական լայնածավալ գործունեություն: Նրանք կոչ էին անում եվրոպական երկրներին և առաջադեմ հասարակությանը օգնություն ցույց տալ հայ ժողովրդին: Նրանցից շատերը, վտանգելով սեփական կյանքը, փնտրում էին անտուն երեխաներ, տեղավորում էին նրանց որբանոցներում: Ամերիկացի միսիոներներն առաջիններից էին, որ ահազանգեցին կայսրության տարածքում՝ Արևմտյան Հայաստանում և Փոքր Ասիայի հայաբնակ շրջաններում տեղի ունեցող արհավիրքների մասին:

Ամերիկյան բարեգործական կազմակերպություններն Օսմանյան կայսրությունում հիմնել էին 551 տարրական և միջնակարգ դպրոց, ութ քոլեջ, ինչպես նաև բազմաթիվ բարեգործական դեղատներ: Այս բոլոր հաստատությունները հայերի ցեղասպանությունից հետո փակվում են[8]: Միսիոներների հաջողությունը պայմանավորված էր նաև ամերիկյան և անգլիական դեսպանների աջակցությամբ: Հայ քրիստոնյաներին բողոքականության մեջ ներգրավելու համար օգտագործվում էր նաև ֆինանսական գործոնը: Այդ ամենը հող էր նախապատրաստում Անգլիայի և ԱՄՆ-ի քաղաքական նպատակների իրականացման համար: «Ամերիկան մեծ արժէք կը դնէր օտար և հեռաւոր ժողովուրդներու սիրոյն վրա: Միսիոնարներ իր սիրոյն դեսպաններն էին: Հիմա իր բազմահազար ներկայացուցիչները ինչ կը տանին արդեօք իրենց հետ: Ինչ որ սիրով և առանց դրամի կը շահէինք երբեմն, այսօր մեր անհամար միլիոններու գետերովը չենք յաջողիր շահիլ»[9]:

Միսիոներական գործունեությունն այնպիսի զարգացման էր հասել Թուրքիայում, որ բազմաթիվ քաղաքների մեջ նրանք իրենց տրամադրության տակ ունեին ընդարձակ և հարուստ քաղաքամաս, որն ուներ իր ներքին ինքնուրույն տնտեսական և առօրյա կյանքը՝ փուռը, ջրմուղը, խանութը, իհարկե, միայն միսիոներների կարիքների համար: Քաղաքամասի հիմնական և գլխավոր շենքերն էին եկեղեցին, որ աղոթատուն էր կոչվում, որբանոցը, հիվանդանոցը և դեղատունը, որ սպասարկում էր ոչ միայն քաղաքամասը, այլ նաև ժողովրդին՝ դեղորայքը հաճախ տալով անվճար: Այդ բոլորը, անմիջական աշխատանքին զուգընթաց, ծառայում էր նաև իրենց կրոնաքաղաքական դաստիարակության գործին: Ժողովրդական անասելի թշվառության մեջ նրանք գտնում էին հայրեր և մայրեր, որոնք սեփական որդուց հրաժարվում էին, իրենց հայտարարությամբ թողնում որբանոցում և միսիոներներին հանձնում[10]:

Որբանոցին զուգընթաց հիմնադրվող դպրոցը նույնպես մեծ արդյունքներ էր խոստանում: Նախ և առաջ այդ դպրոցի դռները բավական լայնորեն

Bitlis, Being Mainly the Narratives of Grisell M. Mclaren and Myrtle O. Shane, New York, Chicago, etc, 1919; **Ussher C. D., M. D., Knapp G. H.** *An American Physician in Turkey. A. Narrative of Adventures in Peace and War, London, 2002.*

[8] **Սահակյան Ռ. Օ.,** *Արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները 1915 թվականին, Ե., 2005, էջ 75:*

[9] *Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 1291, գ. 606, թ. 7:*

[10] **Տերոյան Վ.,** *նշվ. աշխ., էջ 37-38:*

բացվում էին ամբողջ ժողովրդի առջև: Այնտեղ ձրի ուսում ստացողները որոշ պարտավորություններով, հիշողություններով և սովորություններով անմիջապես և մշտապես կապվում էին միսիոներության հետ: Այս բոլոր հիմնարկները կողմնակի և անուղղակի կերպով տանում էին դեպի աղոթատուն:

Ինչպես նկատել է Վ. Տերոյանը. «Միսիոները՝ «Իմպերիալիստական ծիծեռնակը» և՛ բույն էր շինում խնամոտ հոգատարությամբ, և՛ կուլտուրական նախապատրաստական աշխատանքով իմպերիալիզմի հիմքերն էր գցում: Տարիների ընթացքին, երբ քաղաքամասն ընդարձակված լիներ ավելի քան բուն քաղաքն իսկ, և նրա ու նրանց շահերի պաշտպանությունն այլևս անկարելի լիներ վստահել վարձկան ու անվարժ հրացանակիրների, այդ ժամանակ ահա կգար նաև մայր-երկրի հյուպատոսը՝ պաշտպանելու իր պետության շահերը, միջամտելու տեղական ներքին գործերի մեջ»[11]: Մեծ տերու- թյուններն օգտագործում էին միսիոներների գործունեությունը իրենց քաղաքական նպատակներն իրագործելու համար՝ Օսմանյան կայսրության վրա ճնշում գործադրել և տարածաշրջանում իրենց ազդեցությունը մեծացնել: Դրա հետ մեկտեղ շատ միսիոներներ, տեղում ծանոթանալով հայ ժողովրդի դրությանը, ու-սումնասիրելով նրա պատմությունն ու մշակույթը, փորձում էին ըստ կարելվույն նպաստել Հայկական հարցի արդարացի լուծմանը, բողոքում էին մեծ տերությունների երկդիմի քաղաքականության դեմ:

Ակնհայտ է, որ հայերի մեջ բողոքականության տարածումը ուներ թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական և թե՛ կրոնական պատճառներ: Սակայն պետք է ընդունել, որ առկա էին նաև ներքին պատճառներ: Այս հարցի շուրջ ուշագրավ են ժամանակի հասարակական գործիչ, հրապարակախոս Ա. Պետիկյանի մտորումները. «Եթէ պատմական տուեալներու վրայ պիտի հաստատենք մեր դատաստանը, ուրեմն ստիպուած ենք կրօնական բաժանման պատասխանատուութիւնը՝ առնուազն գերակշիռ չափով դնել ոչ թէ օտար միսիոնարներու վրայ, կամ Բողոքականներու վրայ, հապա՝ օրուան եկեղեցական պետերուն վրայ, որոնք դժբախտաբար պակաս գտնուեցան հեռա-տես և խոհական իմաստութեան մէջ, և անարդարանալի մոլեռանդութեամբ դիտեցին, դատեցին և գործեցին: Անտարակոյս աւետարանականութիւնը նաեւ բողոքի առողջ ձայն մը պիտի ըլլար մայրենի եկեղեցիին մէջ: Բայց չէ մի որ այդ ձայնը ոչ մէկ ատեն լռեցնել կարելի եղած է անկէ ասդին: Եթե բարեկարգիչ ազդակ մը պիտի ըլլար աւետարանականութիւնը, ինչու ներսը մնալով չըլլար, կը հարցուի յաճախ: Պատասխանը պատմականօրէն այն է, թէ թոյլատրուեցաւ անոր, որ ներսը մնայ և երբ, ակամայ և բռնադատեալ դուրս ելաւ՝ աւետարանականութիւնը բնականաբար իր յատկանշիչ կերպարանքը առաւ և կազմակերպուեցաւ իբրեւ Աւետարանական եկեղեցի»[12]:

---

[11] Նույն տեղում, էջ 40:

[12] ՀԱԱ, ֆ. 1291, գ. 124, թ. 3:

«Դառնալով մեր ազգային պատմութեան, անգամ մըն ալ մատնանշենք սա բացահայտ իրողութիւնը, թէ երբ մեր պետականութիւնը կորսնցուցինք կրօնական հեղինակութեան նժարը բնականաբար շատ ծանրացաւ: Ժողովուրդը բոլորովին կոթնեցաւ կղերին՝ կամ նուիրապետութեան մը հեղինակութեան վրայ: Պետականութիւնը՝ քաղաքականէն անցաւ կրօնականին»[13]:

Հետաքրքիր զուգորդումներ կարելի է նկատել անցյալի և մերօրյա պատմության շատ իրադարձությունների միջև. «Ամէն բան դուրսէն, արտաքին աշխարհէն սպասող թոյլ ու անչափահաս ազգերը փոխանակ իրենց ձախողութեանց պատճառները քչիկ մըն ալ իրենց ծոցին մէջ որոնելու, ճակատագրական մեղկութեամբ մը անձնատուր կըլլան կրաւորականութեան, եւ կը քշուին արտաքին ազդակներու հոսանքներէն: Կը մնան միշտ ալ դժբաղդ ու դժգոհ: Փոխանակ իրենց պատասխանատուութեան բաժինը վերցնելու եւ անոր դարմանումին վրայ անդրադառնալու, կը յամառին իրենց կարճա-տեսութեանը մէջ, որով եւ քաղաքակիրթ մարդկութեան հեգնանքը կը հրաւիրէն իրենց վրայ: Ատոր համար է որ այս անգամ ալ, քաղաքականութէնէ բոլորովին անկախաբար, կուզենք ուշադրութիւն հրաւիրել մեր ներքին ազգային կեանքի թշնամիներուն վրայ: Ուր տեսնուած է, որ վատառողջ մարմին մը կարենայ յաղթական դուրս գալ յարաբերական պայքարի մէջ: Ուր տեսնուած է, որ ցեցակեր միջուկ ունեցող մինչև իսկ հաստատուն ծառ մը՝ կարենայ դիմակայել փոթորիկին»[14]:

Կարծում ենք, որ այսօր ևս օգտակար կլինի իրատեսական հայացքով ուսումնասիրել այս ներքին գործոնները, որոնք, տեղ գտնելով մեր իրականության մեջ, այն ժամանակ հնարավոր դարձրեցին միսիոներների լայն գործունեությունը մեր շրջանում:

Հարկ է նշել, որ չնայած կրոնական առանձնահատկությունների գիտակցմանը՝ հայ բողոքականները իրենց համարում են աշխարհասփյուռ հայության անքակտելի մաս, որովհետև նրանք պնդում են, որ բողոքականությունը օտարածին երևույթ չէ հայերի համար, այլ, ընդհակառակը, ծագել է մեր ժողովրդի մեջ: Այս տեսակետը նրանք փորձում են հիմնավորել նաև՝ բողոքականության վաղ դրսևորումներ փնտրելով հայ իրականության մեջ ժամանակին տեղ գտած երկու աղանդավորական շարժումների՝ Պավլիկյանների և Թոնդրակյանների մեջ: Գոյություն ունի նաև մեկ այլ տեսակետ, որը փորձում է ցույց տալ, որ եթե անգամ բողոքականությունը չունի հայկական ծագում, ապա դա չի զրկում բողոքականներին հայության մի մասնիկը լինելուց: Այդ տրամաբանության համաձայն՝ հայերն իրենց զարգացման ընթացքում փոխառել են նաև այլ գաղափարախոսություններ, որոնք յուրացվել են՝ վերածվելով ազգային գաղափարախոսության մասի: Հայ բողոքականները նույնքան հայ են, որքան մյուս հայերը: Նրանք դա

[13] Նույն տեղում, գ. 592, թ. 1:
[14] Նույն տեղում, թ. 1:

հիմնավորում են նաև այն իրողությամբ, որ հայ բողոքականները նույնպես ենթարկվել են ազգային հողի վրա տեղի ունեցող հալածանքներին:

Այսպիսով, միսիոներական գործունեությունը Արևմտյան Հայաստանում պայմանավորված էր մի շարք արտաքին և ներքին գործոններով, սակայն հարկ է նշել, որ եթե անգամ նրանց ծավալած բարեգործական աշխատանքներն ունեին նաև հեռահար նպատակներ, այնուամենայնիվ, այդ ծանր ժամանակահատվածում նրանք կարողացան իրական օգնություն ցույց տալ հայ ժողովրդին: Գտնվելով հայերի կողքին և հայերի մեջ՝ նրանցից շատերը հայ ժողովրդի խնդիրներին սկսեցին վերաբերել արտացավորեն՝ փնտրելով դրանց հնարավոր լուծումները: Նրանց ծավալած լուսավորական և կրթական աշխատանքներով են պայմանավորված ժամանակի արևմտահայ երիտասարդության և մանուկների կրթական հաջողությունները. նույնիսկ այդ օրհասական տարիներին հայ ժողովրդի շատ զավակներ կարողացան դառնալ կրթված ու բանիմաց մարդիկ և անգամ արտերկրում պայքարել համահայկական խնդիրների համար:

ПРИЧИНЫ РАСПРОСТРАНЕНИЯ ПРОТЕСТАНТСТВА В ЗАПАДНОАРМЯНСКОЙ СРЕДЕ В КОНЦЕ XIX – НАЧАЛЕ XX ВВ.

ГЕВОРКЯН С. Б.

Резюме

В западноармянской среде протестантство стало распространяться в XIX в. вплоть до начала XX в. благодаря активной деятельности американских миссионеров. Утвердившись в Западной Армении, миссионеры стали свидетелями армянских погромов 1894-1895 годов. Воспоминания и свидетельства американских протестантских миссионеров явствуют об антиармянской политике османского правительства.

THE REASONS FOR THE SPREAD OF PROTESTANTISM IN WESTERN ARMENIA AT THE END OF THE XIXTH CENTURY AND EARLY XXTH CENTURY

S. GEVORGYAN

Abstract

Within the period of the 19th century till the beginning of the 20th century, because of the intensive activity of the American missioners, Protestantism began spreading among Western Armenians. Settling down in Western Armenia, starting from 1894-95, the missioners inadvertently witnessed the Armenian massacres. The memories, information, and testimony provided by the American Protestant missioners reveal the anti-Armenian policy of the Ottoman government disproving the deceitful hypotheses of the modern Turkish historiography.